

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Մահակյան

Մարաբ Մծուրնացին Աբյուղենուսի և Խորենացու միջնո՞րդ

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Ն. Աբրահամյանի կողմից 6/XII 2013)

Առանցքային բառեր՝ Մարաբ Մծուրնացի, ազգաբանական ցանկ, Աբյուղենուս, Խորենացի, թարգմանություն, Եվսեբիոսի ժամանակագրություն:

Քննարկենք հայ դասական բանասիրության մեջ խնդրահարույց այն հարցը, թե հունական աղբյուրի օրինակով հունագիր հայ հեղինակ Մարաբ Մծուրնացին ինչպես է կազմում հայոց նահապետների ցանկը՝ այն հարմարեցնելով հանուր մարդկության «ազգաբանական» ցանկին: Ճիշտ է, այս հարցի քննարկման համար ունենք միայն մեկ աղբյուր՝ Խորենացու Պատմությունը, բայց այդ էլ բավական է, եթե վերջինիս մեկնողական կամ այլ կարգի հավելումները կարողանանք գատել Մարաբի խոսքից:

Նախ, մինչև Մարաբի Պատմությունից օգտվելը, Խորենացին բերում է ընդհանուր նախնի Ադամի ժառանգների ցանկը մինչև Նոյ՝ ըստ Ս. Գրքի (Ի. Դ): Ապա անուղղակի բողոք է հայտնում, որ Ս. Գիրքը («գիրք ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ էլիք զայլոցն իբր զարհամարհալեացն և խորոց անարժան կարգելոց բանից, զորոց մեք սկսեալ ճառեցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամեննին անսուտ») (Ի. Ե)¹ միայն Սեմի զավակների ցանկն է տալիս, ուստի ինքը հավաստի աղբյուրների հիման վրա ավելացնում է նաև Քամի և Հաբեթի սերնդաբանական ցանկերը: Սրանց ճշմարտացի լինելու գլխավոր ապացույցը յուրաքանչյուրի մեջ եղած անունների հավասար քանակն է (10-ական):

¹ Թարգմ. ըստ Ստ. Մալխասյանցի. «Մանավանդ որ Ս. Գիրքը յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ, մյուսներինը լքեց՝ իբրև արհամարհելի և իր կողմից խոսքերով նշվելու անարժան (ազգերի): Սրանից սկսելով՝ կճառենք, որքան կարողություն կա, ինչպես որ հավաստին գտանք հին պատմությունների մեջ՝ մեր մասով ամեննին անսուտ» ([1], էջ 21):

Մեմից - Աբրահամ, Քամից - Նինուաս, Հաբեթից - Արամ, թեև 10-րդ Արամին ժամանակով և բովանդակապես համընկնում է 9-րդ Նինուսը, որովհետև, ինչպես ասվում է, նրանց տարիներն անորոշ են):

Ահա այս ցանկերին հաջորդում են Խորենացու աղբյուրաբանական ճշգրտումները, որոնց համաձայն՝ Մեմի թոռ Կայնանին և Հաբեթի թոռ Թիրասին հիշում են բոլոր ժամանակագիրները, Մեծրայիմին՝ որպես Քամի թոռի, չի հիշում ոչ մի ժամանակագիր, թեպետ Ս. Գիրքն էլ վերջին երկուսին տարբեր տեղեր է դնում: Իսկ ահա երեքին էլ իբրև թոռներ է կարգում մի ասորի ժամանակագիր: Ինչպես գրում է Խորենացին. «Այլ այսպես զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ և ընթերցասիրէ ումեմնէ Ասորոյ, և հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն» (I. Ե):

Ուշիմ ասորին ոչ թե Մար Աբաս Կատինան է, ինչպես թվացել է ոմանց, այլ Անդրեաս ժամանակագիրը: Այս նույնացումը նկատել է նաև Ռ. Վարդանյանը՝ որոշելով, որ Անդրեասի գործը հայերեն է թարգմանվել 429-35 թթ. միջև ([2], էջ 82):

Այնուհետև հերթը հասնում է առանձին ազգերի նահապետներին Նոյի ծոռներից բխեցնելուն, որ Խորենացին «դժվարահավաք և տաժանելի» աշխատանք է համարում, «առաւել ևս գիւտ նախարարականաց ազգաց ծննդոց յելից որդւոցն Նոյի» (I. Ե): Բայց պատմահայրը կարողանում է այդ գործն էլ անել և զարմանքի մատնել ընթերցողին: Ինչպես դիպուկ մեկնաբանել է Ստ. Մալխասյանը, Խորենացուն հաջողվել է, թեկուզ Ս. Գրքից շեղվելու միջոցով, Հայկին ու Բելին ժամանակով իրար մոտեցնել՝ դարձնելով համապատասխանաբար 5-րդը և 4-րդը իրենց ցանկերում, ապա և Նինուսին ու Արամին ժամանակակից դարձնել, որպեսզի հետագա պատմությանը բովանդակապես չհակասեն ([1], էջ 461-462): Ահա, Բել - Հայկ և Նինուս - Արամ ժամանակային զուգադրումները Խորենացին աներկբայելի է համարում, որովհետև այդ մասին պատմում է «ի յոյով իրս հաւատարիմն Աբիւղենոս» (I. Ե): Ու բերում է Նինուսից Բել՝ քաղդեական, ու Արամից Հայկ՝ հայկական յոթնանուն (Արային չհաշված) ցանկերը՝ Հայկի դիմաց բացատրելով, «որ եղև հակառակ Բելայ» և այդ ամենը վերագրելով վստահելի Աբյուղենոսին. «Եւ զայս մեզ Աբիւղենոս յիւրում առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան ասէ, զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին» (I. Ե): Պարզվում է, որ այդ մասին Աբյուղենոսը գրել է առանձին մանր ազգաբանական պատմության մեջ, որը ոմանք վերացրել են, և մեզ չի հասել: Եվ որպեսզի հիշատակված աղբյուրի հանկարծակի չքանալը կասկածելի չթվա ընթերցողին, վկայակոչում է մի այլ հույն պատմիչ Կեփալիոսին: Վերջինիս համաձայն՝ նման բան հնարավոր է, որովհետև ինքն էլ իր աշխատության սկզբում սկսել էր բոլոր մանր ազգաբանությունները գրի առնել արքունի դիվաններից, բայց թագավորական հրաման է ստացել, որ թողնի աննշան և վատ

մարդկանց հիշատակը և նշի միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիներին:

Ճիշտ է, Կեփալիոնի վկայակոչումը փոքր-ինչ անուղղակի է (հմմտ. [3], էջ 61, 65), բայց Խորենացին կարող էր դա իր նպատակին ծառայեցնել, մանավանդ, որ չէր կարող տեսած լինել Աբյուղենոսի կորած երկր: Ինչ խոսք, որնիցե կեղծ տեղեկություն կարելի է ամրացնել մի այլ հավաստի և վավերական դատողությամբ՝ համաձայն անտիկ պատմագրական ավանդույթի, և դա խորթ չէ նաև Խորենացուն: Ընդունված էր նաև կեղծիքը մի այլ կեղծ վկայությամբ վավերացնել, բայց այն դեպքում, երբ վավերական հիմնավորում չկար, ինչպես որ կարիք չկար վավերական տեղեկությունը մի այլ կեղծով ամրացնելու: Համենայնդեպս, որտեղի՞ց Խորենացուն Աբյուղենոսի վարկածը, եթե ոչ իր անմիջական ազգաբանական աղբյուրից՝ Մարաբ Մծուրնացու Պատմությունից ([3], Աբյուղենոսի մասին՝ էջ 53-58): Չէ՞ որ Մարաբն աշխատում է նույն մեթոդով, ինչով Բերոսոսը, Բագմավեպը, Աբյուղենոսը և մյուս իմաստասեր «ազգաբանները»: Ինչպես սրանք են քաղդեերենից հունարենի թարգմանել քաղդեական ազգաբանական պատմությունները (Եվսեբիոսը Աբյուղենոսի երկը բնորոշում է իբրև քաղդեացիների պատմություն) և ավելացրել իրենց հայտնի ազգերի նահապետներին, այնպես էլ Մարաբն է եղած աղբյուրներին ավելացրել հայոց ազգաբանությունը: Ուսյալ հայերը, մինչև Ս. Գրքի համամարդկային կառույցում իրենց տեղը գտնելը, պետք է տեղավորվեին եղած ավելի հին համակարգում: Դա ջրհեղեղյան և աշտարակաշինական առասպելաբանությունն էր, որի զարգացման և տարածման կենտրոնը Բաբելոնն էր: Դրա համար էլ համամարդկային սերնդաբանական և ազգաբանական ցանկերը բաբելոնյան ծագում ունեն: Ազգաբանության ժանրը Բաբելոնից աստիճանաբար սփռվեց ամենուր և հատկապես ծաղկում ապրեց մակեդոնյան գլոբալիզմի՝ հելլենիզմի դարաշրջանում՝ ծնելով նորանոր տեղային տարբերակներ ու հավելվածներ: Ազգաբանությունը բարերար գաղափարախոսություն դարձավ նաև միջազգային առևտրի համար և շատ շուտով գրքերի տեսքով տեղ գրավեց մանր ու մեծ թագավորական գրադարաններում: Խորենացին ճիշտ է ընկալել Մարաբի ազգաբանական պատմության էությունը, երբ նրան տեղափոխել է մ.թ.ա. II դ. և գործուղել Նինվեի երևակայական արխիվ՝ օգտվելու միջագետքյան մատյաններից, որոնք իբր թարգմանված և ի մի էին բերված մի հունարեն գրքում, և որի պատվիրատուն էր Ալեքսանդր Մեծը: Ամեն ինչ հորինված է դարաշրջանի խորհրդանիշների լեզվով, բացի այն, որ Մարաբը ևս մի Բերոսոսի կամ Աբյուղենոսի նման ուսյալ իմաստասեր է: Մակայն, ի տարբերություն իր հեղինակավոր հույն նախորդների, ինչպես նաև իր ավագ ժամանակակից Աբյուղենոսի, Մարաբը չի անտեսում մանր ազգաբանությունը

և կարևորում է՝ հնչեցնելով մի խոսք, որ տրամաբանորեն ու հոգեբանորեն կարող էր ասել միմիայն առաջինը «ազգաբանողը» և պատմություն գրանցողը. «Ձի թեպետ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել» (I. 3): Եվ իրոք, Խորենացին իր երկում պետք է Մարաբ Մծուրնացուն ասպարեզ տար մինչև նրա անունը տալը: Աբյուղենոսի օրինակով երբ Մարաբը կազմում էր իր ազգաբանական անվանացանկը, առաջին հերթին պետք է ջանար, որ զուսանական բանավոր վեպում հակամարտող Հայկն ու Բելը, ապա և Արամն ու Նինոսը (Արայի հետ առնչությամբ թելադրված) հայտնվեն ցուցակների համապատասխան զուգահեռ դիրքերում: Եթե Բելը Նինոսից (10-րդ) վեր գրավում է 7-րդ տեղը, նշանակում է նա Քամից հետո 4-րդն է, ինչն էլ նշանակում է իր հերթին, որ Աբյուղենոսն է անուղղակիորեն հուշում Հայկին համարելու գոնե Հաբեթից հետո 5-րդ սերունդ, որպեսզի դառնան իրար ժամանակակից: Այս պարագայում ենթադրվում է, որ Մարաբը հղեր Աբյուղենոսին՝ որպես հավաստի աղբյուրի, և թվարկեր հայոց յոթնանուն ցանկը: Իսկ սա էլ բավական է, որ նույն «պատմագրական» դպրոցի հետևորդ Խորենացին Աբյուղենոսին վերագրի նաև հայկական ցանկը կամ Աբյուղենոսին ընկալի իբրև քաղղեականի հետ միասին նաև հայկական ազգաբանական շարքի հեղինակի: Բայց տեսնելով, որ քաղղեական ցանկը հետագայում հասել է Եվսեբիոսին, իսկ հայկականի հետքն անգամ չկա, Խորենացին հարկադրաբար հորինել է ճշմարտանման պատճառ մանր ազգաբանությունների կորստյան համար՝ վկայակոչելով վավերական Կեփալիոնին²:

Բայց հետևենք Խորենացու շարադրանքին, թե ինչպես է համադրում անտիկ և սուրբգրային ավանդույթները Նոյ-Քսիսութրեսի որդիների մասին: Հասկանալի է, որ անտիկ հեթանոսական ավանդույթից բխում է Մարաբը, իսկ մյուսից՝ Խորենացին:

Առաջինը հիշատակում է Բերոսյան Սիբիլլային, ինչպես քիչ հետո կհամոզվենք, Մարաբի միջնորդությամբ նրան սիրելի և արդարախոս անվանելով. «Յառաջ քան զբուրգն, ասէ, և զբազմաբարբառն լինել ձայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկութեանն Քսիսութրեսայ ի Հայս՝

²Այս հարցի շուրջ եղած բանասիրական վեճերը՝ հայտնի տեսակետների համոզիչ հերքումով և սեփական կարծիքի պնդումով, տես Արամ Թովփյանի աշխատության մեջ ([3], էջ 55-63): Ա. Թովփյանի տեսակետը կամրանա, եթե նա ընդունի, որ օտար աղբյուրներն իրենց ցանկերում հայերին հիշատակում են հայազգի էպոնիմ-նահապետի մակարդակով և ոչ ավելին:

Զրուանն և Տիտանն և Յապետոսթէ լինէին իշխանք երկրի» (I. 6): Եվ անմիջապէս շարունակում է՝ հաշտեցնելով այն սուրբգրային ավանդույթի հետ. «Որ ինձ թուին Սեւ, Քամ և Յաբէթ» (I. 6):

Արդէն բազմիցս բանասերները նշել են, որ Յապետոսթէ անվան մեջ ներառվել է նաև հունարենի շաղկապը (Ζε), որ դրվում է թվարկվող անուններից մեկից հետո՝ մի տեսակ սաստկացնելով բառից առաջ դրվող և շաղկապը (հմմտ. [1], Ստ. Մալխասայանի ծնթգր., էջ 462-463, [3], էջ 61): Յապետոսթէի դիմաց Խորենացին դրել է սուրբգրային ձևը՝ Յաբէթ, որով անուղղակի ցույց է տվել, որ ինքն ուշադրություն է դարձրել նշված անվանը, ուստի և անձնանունն աղավաղել է նա, ով հունարեն ձեռագրից օգտվել է առանց բառանջատումի, քանի որ Շէ շաղկապն ընկալվել է իբրև բառի վերջնամաս: Միաժամանակ երևում է, որ այդ սխալ ընթերցման հեղինակը ոչ միայն հունագետ Խորենացին, այլև Մարաբ Մծուրնացին էլ չի կարող լինել, որովհետև նա գրել է հունարեն՝ քաղելով Բերոսյան Սիբիլայից: Ուրեմն Յապետոս անվան կեղծ տարբերակը ծնվել է հայերեն թարգմանչի ձեռքով, և թարգմանիչն էլ հունարեն սխալ ընթերցելով «Յապետոստէ», այն նախ ընկալել է իբրև ամբողջական մեկ անուն, ապա տառադարձել է յուրովի՝ Յապետոսթէ, գուցե սուրբգրային «Յաբէթ»-ը մտքում կրկնելու, գուցե իր բարբառի կամ այլ անհայտ պատճառով: Ինչևէ, Խորենացին նույնությամբ պահպանում է թարգմանչի տարբերակը, թեկուզ նրան անձանոթ չէր լինի հունական տիտաններից մեկի անունը՝ Յապետոս: Նշանակում է՝ Մարաբի երկը V դ. թարգմանվել է հայերեն: Կփորձենք ճշտել՝ անցնելով առաջ:

Քիչ հետո, երբ Զրվանը բռնանալով տիրում է երկու եղբայրների վրա, Խորենացին մեջ է բերում Մարաբի խոսքը՝ քաղված Սիբիլայից. «...ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսթէ, ի մարտ պատերազմի ընդ նմա զրգոելով» (I. 6): Կովին միջամտում է նրանց քույր Աստղիկը, և պայման են կապում, որ թագավորող Զրվանի զավակներին այդուհետ ոչ թե սպանեն, ինչպես նախորդ երկուսին, այլ հեռացնեն արևմտյան Օլիմպոս լեռը, որ կոչում էին Դիւցընկէց:

Այստեղ առկա է թարգմանչի II հետքը՝ Աստղիկ և Դիւցընկէց: Խորենացին, իհարկե, Աստղիկ դիցուհու անունը կարող էր ինքն էլ թարգմանել, բայց երևի դա կարտահայտվեր ոճի մեջ՝ ասելով միայն հունարեն կամ նախ հունարեն ձևով: Օլիմպոսի դեպքում նախ պետք է ասել, որ այդ բառի արմատից կարող է արտածվել «ընկեցիկ» իմաստը, բայց այստեղ այն թարգմանված է վիպական ստուգաբանության համաձայն(դից + ընկեցիկ): Զգացվում է, որ բնագիրը թարգմանված վիճակում է հայտնվել Խորենացու ձեռքի տակ, որին էլ հաջորդել է Խորենացու հավելումը. «Արդ, զայսուսիկ այլ ոք թեպէտ առասպելս, թեպէտ ճշմարտութիւն հաշուեալ համարեսցի, բայց որպէս ես հաւանեալ եմ,

բազում ինչ ճշմարիտ է»(I. 6): Եթե Խորենացին Ջրվանի զավակներին լեռան վրա ձգելու մոտիվը դարձնենք Օլիմպոս-ի հայերեն թարգմանության հիմք՝ Դյուցընկեց, ապա իր ասածի մասին չէր ասի, թե անկախ ուրիշների կարծիքից, սրանք շատ մասով ճշմարիտ են: Այս գնահատականը նա տալիս է մի տեսակ չեզոք դիրքից՝ որպես երրորդ կողմ: Եվ ի հաստատումն իր կարծիքի՝ վկայակոչում է Եպիփան Կիպրացու «Հերձուածոց յանդիմանութիւն» երկը:

Այնուհետև Խորենացին ներկայացնում է Սիմ (=Ջրվան) նախահոր տեղական-բանահյուսական արձագանքները Սիմ, Տարոն, Յրոնք և Ջարեվանդ տեղանունների ժողովրդական ստուգաբանության մեջ: Այդ հատվածի սկսվածքի և վերջվածքի ձևակերպման մեջ առկա է տոնայնության փոփոխումը («Բայց պարտ է մեզ զմանց անգիր հին գրոյցս, որ պատմեալ եղեն ...») կամ մի տեսակ սահմանային, եզրափակիչ ոճի կիրառումը («Եւ այսոքիկ գրոյցք սուտ և կամ թէ արդարև լեալ մեզ չէ ինչ փոյթ ...»): Վերջապես, կարևոր է նշել, որ Խորենացին այդ հատվածում հիշատակում է զուտ Տարոնաշխարհիկ ավանդապատումներ, որոնք լավ պիտի իմանար ինքը՝ որպես բնիկ տարոնցի: Դեռ ավելին, այդ ավանդապատումներից մեկը՝ Յրոնք, պարզապես անհնար կլիներ պատմել հունարեն, եթե չօգտագործվեր հատուկ նկարագրական-բացատրական պատմելաոճ, որովհետև այն պատկանում է, այսպես կոչված, «լեզվական» ավանդապատումի ժանրին:

Հաջորդիվ Խորենացին փոքր-ինչ նորից տարվում է հեթանոսական և սուրբգրային տեղեկությունների հաշտեցմամբ՝ այս անգամ արդեն 7-րդ գլխում, ապա անցնում է պարթև թագավորների հիշատակմանը, որտեղ առաջին անգամ հնչեցնում է իր անփոխարինելի աղբյուրի հեղինակի անունը՝ Մար Աբաս Կատինա (I.8), ով Հայոց Վաղարշակ թագավորի պատվիրակն է պարթևների Արշակ թագավորի մոտ՝ Նինվեի արքունական մատյաններից օգտվելու նպատակով: Խորենացու կողմից լիովին հորինված այս իրադրության մեջ Մարաբ Մծուրնացուն վիճակված է գտնել իր գլխավոր աղբյուրը՝ Ալեքսանդրի Մատյանը. «Որոյ սկիզբն լեալ, ասէ, զԶրուանն և զՏիտանն և զՅապետոսթէ»: Մարաբից մեջբերված առաջին նախադասությամբ իսկ պարզվում է, որ Յապետոսթէ անվանաձևը թարգմանիչը համարել է օրինաչափ, և որին արդեն Խորենացին չի արձագանքում: Պարզապես Կրոնոսի տեղը գրված է Ջրուան, ինչը շատ բնորոշ է արևելյան երկրի ու նրա պատմիչ Մարաբի համար: Իսկ երբ Բաբելոնի աշտարակի փլուզումից մարդիկ և լեզուները խառնվել են իրար, աղմուկի մասնակիցներից մեկն էլ եղել է «Յապետոսթեանն Հայկ»: Այսինքն՝ հունարենի շաղկապը ոչ միայն դարձել է բառի վերջնամաս, այլև մասնակցում է բառի ածանցմանը, ինչը որևէ կասկած չի թողնում, որ այն չիմացության և ոչ թե անուշա-

դրության արդյունք է: Եվ մի՞թե սա չի նշանակում, թե թարգմանիչը շարունակում է կիրառել իր «գտած» անվանաձևը նաև անկախաբար՝ Հաբեթյանի փոխարեն: Այստեղ՝ այլ փաստեր չունենալու պարագայում, մեզ հավելյալ տեղեկություն է հաղորդում հենց այն «սխալը», որի նորովի կիրառումը դառնում է բավականին «ինֆորմատիվ»: Որովհետև, եթե մինչ այդ եղած կիրառությունները հնարավոր էին Մարաբի հունարեն նախադասություններում՝ որպես քերականորեն օրինաչափ երևույթ՝ աղավաղված թարգմանչի կողմից, ապա այս դեպքում կիրառված ձևը չի կարող ունենալ հունարեն նախաձև, հետևաբար այն հայերեն գրել է թարգմանիչը՝ Մարաբից անկախ, հավանաբար Մարաբի հունարեն «Յապետոսածին Հայկ» անվան դիմաց, ինչպես որ հունարեն «Տիտանածին Բելը» հայերեն դարձել է Տիտանեան Բել:

Շարունակելով Խորենացին գրում է. «Արդ, ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոսթէ, Մերոզ, Սիրաթ, Թակլադ», որին իսկույն հետևում է Խորենացու հավելումը. «Որ է Յաբեթ, Գումեր, Թիրաս, Թորգոմ» (I.9), ապա հետևում է Մարաբյան նախորդ թվարկման շարունակությունը՝ Խորենացու միջամտությամբ. «Յետ որոյ նոյն ժամանակագիր (Մարաբ Մծուրնացին - Ա. Ս.) յառաջ մատուցեալ ասէ. «Հայկ, Արամանեակ», - և նորից Խորենացու խոսքը, - «և զայլսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք» (I.9): Այսինքն՝ հիշեցնում է առաջվա թվարկումը մինչև Արամ և Արա: Այս մեջբերման նորությունն այն է, որ Մարաբի անվանացանկում «Յապետոսթէ» ձևը հայտնվում է շարքի սկզբում՝ բացելով հայկական «ազգաբանական» ցուցակը և թվարկելով մինչև Արամանեակ, և հղում է կատարում առաջվա ասածին: Իսկ առաջվա ասածը, պարզվում է, Աբյուղենոսին վերագրվածն է (I. 5), ինչին արդեն կասկածեցինք Աբյուղենոսի հարցի քննարկման ժամանակ և վերագրեցինք Մարաբին:

Այժմ Թ գլխի վերջին տողը նորից վերընթերցենք. «Արդ, ի նոյն մատենէ (Մարաբի - Ա. Ս.) սկսեալ ասացից. Յապետոսթէ, Մերոզ, Սիրաթ, Թակլադ ... Յետ որոյ նոյն ժամանակագիր (Մարաբը - Ա. Ս.) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արամանեակ, և զայլսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք» (I.Թ): Սա նշանակում է, որ առաջվա ասածը նույնպես Մարաբից էր քաղված, բայց Խորենացու կողմից վերագրված էր Մարաբի համար օրինակ ծառայած Աբյուղենոսին:

Այսքանից հետո, կասկածամիտ լինելով անգամ, պետք է ընդունել, որ Մարաբի խոսքը Խորենացին է վերագրել Աբյուղենոսին, և որ մ.թ. 2-րդ դ. պատմիչ հայ Մարաբ Մծուրնացու հունարեն Պատմությունը թարգմանված է եղել հայերեն 5-րդ դարում անհայտ թարգմանչի կողմից:

Մատենադարան

Ա. Ա. Սահակյան

Մարաբ Մծուրնացին Աբյուդենոսի և Խորենացու միջնորդ

Մովսես Խորենացին Մարաբի Պատմության հայոց ազգաբանական ցանկի աղբյուր է համարում II դ. պատմիչ հույն Աբյուդենոսին՝ հակասելով ինքն իրեն, որովհետև, ըստ նրա, Մարաբն ապրել է մ.թ.ա. III-II դդ.: Բնագրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ Մարաբ Մծուրնացին հայոց ազգաբանական ցանկը կազմել է ոչ թե Աբյուդենոսից օգտվելով, այլ նրա օրինակով՝ ըստ համամարդկային ազգաբանական ցանկի, որում հայկական ճյուղը բացակայում էր: Պարզվում է, որ ոչ թե Մարաբն է եղել միջնորդ Աբյուդենոսի և Խորենացու, այլ Մարաբի «Պատմության» հայերեն թարգմանիչն է եղել միջնորդ Մարաբի և Խորենացու:

А. А. Саакян

**Мараб Мцурнати: посредник между
Абиденосом и Хоренати?**

Мовсес Хоренати считает, что источником генеологического списка армянских патриархов (Гайк, Арам и др.) в «Истории» Мараба Мцурнати является греческий историограф II в. Абиденос. Однако он противоречит самому себе, поскольку по его свидетельству Мараб жил в III – II вв. до н.э. Текстологический анализ показывает, что Мараб составил свой список не на основе Абиденоса, а по его образцу, основываясь на другом, общечеловеческом генеологическом списке, в котором отсутствовала армянская ветвь. Выясняется, что Мараб не был посредником между Абиденосом и Хоренати, но был другой посредник, между Марабом и Хоренати – неизвестный переводчик V в. «Истории» Мараба на армянский.

A. A. Sahakyan

**Marab Mtsurnatsi: An Intermediary between
Abydenus and Khorenatsi?**

Movses Khorenatsi considers Abydenus, the Greek historiographer of the 2nd century, to be the source for the genealogical list of Armenian ancestors (Hayk, Aram, etc.) in the «History» by Marab Mtsurnatsi. However Khorenatsi contradicts himself, as according to him Marab lived in the 3rd – 2nd centuries BC. The textological analysis reveals that Marab made his list not on the base of Abydenus, but followed him using common to mankind some other genealogical list, in which there was no Armenian branch. It becomes clear that Marab was not an intermediary between Abydenus and Khorenatsi. But there was another intermediary, between Marab and Khorenatsi, the unknown translator of the 5th century who realized the Armenian translation of Marab's «History».

Գրականություն

1. *Մովսես Խորենացի*, Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Եր., 1981, 588 էջ:
2. *Վարդանյան Ռ.*, Հայոց Տոնացույցը, Եր., 1999, 647 էջ:
3. *Թովիչյան Ա.*, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001, 195 էջ: